

Նաև կրթել բայը: Այս բառով անվանում են հետեյալ գործողությունը, մեծագույն փոքրիկ ձողի (որ կոչվում է կրթիչ) ոգևոթյամբ կողմից թելում են, վերացնում երա ավելորդ մազմզուկները: Մեր կարծիքով, Հաղրոթի բարբառի այս կրթիչ բայը գրական հայերենի նույնանուն բայն է, երա պես կազմված է կիրք արմատից, բայց ունի նշված մասնավոր իմաստը: Նշենք, որ հնչյունական կազմի տեսակետից հայերենի կրթիչ բայը Հաղրոթի բարբառում պետք է լիներ և կա միևնույն կրթիչ ձևով: Ինչ վերաբերում է իմաստային կազմին, պետք է ասել, որ շնայած գրանց միջև իմաստային որոշակի տարբերություններ, այնուամենայնիվ կա նաև որոշ բնորոշություններ: Ինչպես կրթիչով ու գաստիարակելով վերացնում են կրթիչի անցանկալի գծերը և ցանկալի բնավորություն են մշակում, նույն ձևով էլ կրթիչով (<կրթիչ>) վերացնում են թելի ավելորդ մազմզուկները, անհարթությունները, այն դարձնում հարթ, ողորկ: Իմաստային նշված որոշ տարբերություններ, որ այնուամենայնիվ կա գրանց միջև, չի կարող մեր բացատրության վերաբերյալ կասկած հարուցել, որովհետև, ինչպես նշում է Հ. Անադյանը, գրական հայերենի

«կիրք արմատի նախնական իմաստը» ուսանիլ և կամ սովորիլ չէ» (Հայերեն արմատական բառարան, հատ. 3, էջ 1211): Այս տեսակետից ուշագրավ է նկատի ունենալ կրթիչ բայի իմաստը գրաբարյան հետեյալ դարձվածի մեջ «կրթիչ» ձևի ընդ ձեռքս վիճաց»՝ «մի՛ քսվելով սոգոսկելը քարերի միջով» խորիւշ (շապիկը) փոխելու համար: Ի դեպ նշենք, որ Ղարաբաղի բարբառի կրթիչ բայը Անադյանը իր «Գաղափարական բառարան»-ում ներկայացնում է լորել ձևով, որ ոչ ճիշտ առաջադրվածության արդյունք է:

Այսպիսով, մեր կարծիքով, Հաղրոթի (այլև Ղարաբաղի) բարբառի հիշյալ կրթիչ բայը հայերեն կրթիչ բայից է ծագում, ինչպես և կրթիչ-բ' կրթիչ հայերեն բառից՝ վերջինս այդ բարբառին հատուկ մասնակի հնչյունափոխությամբ, այն է՝ ի>ե, հմմտ. միտմ>մեմմ, վիգ>վեգ, ձիտ>ձետ և այլն:

Ինչպես երևում է, նշված թերությունները մասնակի բնույթ ունեն և չեն իջեցնում Ա. Պողոսյանի «Հայաստանի գիտական կարևոր արժեքը»:

Ս. ԱՐԲԱՆՅԱՆ

ՄԱՏԵՆԱԳԻՏԱԿԱՆ ՄԻ ՔԱՆԻ ՃՇԳՐՏՈՒՄՆԵՐ

Ալ. Մյասնիկյանի անվան հանրապետական գրադարանում 1958 թ. աշխատանքներ են տարվում հայ տպագիր գրքի ամբողջական մատենագիտություն կազմելու ուղղությամբ: Բազմահատոր այդ մատենագիտության առաջին հատորը ընդգրկելու է հայ հնատիպ գիրքը: Այն լինելու է մինչև 1800 թ. հայերեն տպագրված բոլոր գրքերի մի ժամանակագրական, ծանոթագրված ցուցակ, ուր տրվելու են յուրաքանչյուր գրքի անվանաթերթի պատճենը, հիշատակարանը, գրքի տպագրական առանձնահատկությունները, քանակական տվյալները (էջերի քանակ, չափս և այլն), գրքի գտնվելու վայրերը և ուրիշ տեղեկություններ:

1963 թ. գրադարանը հրատարակեց «Հայ հնատիպ գրքի մատենագիտական ցուցակ» (կազմ.: Ղեներ՝ Հ. Դավթյան, Հ. Սիվանյան, Ն. Ոսկանյան, Ք. Կորկոտյան, Մ. Միրզոյան, Ս. Սավալյան, 308 էջ), որի առաջարկում գրադարանի ղեկավարությունը դիմում է գիտնականներին, գրասերներին և բոլոր նրանց, ովքեր որևէ ձևով կարող են ճշտել ու լրացնել այս ցուցակը, գրել «ցուցակում տեղ գտած թերիների մասին» (էջ III):

Հնդառաջելով «Ցուցակ»-ի առաջարկում գրադարանի ղեկավարության արած խնդրանքին,

մենք ուզում ենք մի քանի էական դիտողություններ անել «Ցուցակ»-ի վերաբերյալ, նախապես նշելով, որ այն, իրոք, օգտակար մի ձեռնարկ է հնատիպ գրքի մատենագիտության բուն հատորը կազմելու ճանապարհին:

Ամենից առաջ աչքի է զարնում այն, որ ներկա «Հայ հնատիպ գրքերի մատենագիտական ցուցակ»-ում տեղ են գտել այնպիսի գրքեր, որոնք իրականում չկան (և երբեք չեն եղել): Ըստ որում, դրանց չլինելը իմացել են նաև կազմողները և շնայած դրան մտցրել իրենց ցուցակի մեջ միայն այն պատճառով, որ այդպիսի հիշատակված են եղել այս կամ այն մատենագիտական աղբյուրում:

Օրինակ, 413 համարի տակ կարդում ենք ժամագիրք: Կ. Պոլիս, տպ. Աստվածատուրի, 1735: Եվ ապա՝ ԳԼ 132, որ նշանակում է, թե այսպիսի հրատարակություն նշված է Դ. Լևոնյանի «Հայ գիրքը և տպագրության արվեստը» աշխատության (1958 թ. հրատ.) 132-րդ էջում: Սակայն բերված նկարագրության տակ կա ծանոթություն՝ «ՏԵ՛ս Ն՝ 439 նկարագրության ծանոթագրությունը»: Այս համարի տակ նույնպես ժամագիրք է նկարագրված, միայն 1738 թ. հրատարակություն: Կարդում ենք սրա ծանոթագրությունը. «Սույն հրատարակությունը Լևոն-

ճանը թյուրիմացարար նշել է որպես 1735 թ. տպագրություն: Այսինքն՝ հեղինակի անփութությունը, թե սրբագրիչի մեզոպոլ Գ. Հեղինակի գրքում վրիպակ է տեղի ունեցել՝ փսմազրի 1738 թ. տպվել է 1735: Սա բավական է եղել, որպեսզի ցուցակում այդ նույն փսմազրի իրրև երկու գիրք նկարագրվի 413 համարի տակ իրրև 1735, իսկ 439-ի տակ՝ իրրև 1738 թ. հրատարակություն: Եվ այդ արվել է այն դեպքում, երբ կազմողները հաստատ իմացել են 1735-ի հրատարակության չգոյությունը մասին:

Շատ դեպքերում էլ այս կամ այն հեղինակի աշխատության մեջ եղած վրիպակը կամ թյուրիմացությունը բոլորովին չի ստուգվել, այլ իրրև ճիշտ տեղեկանք ընդունվել է, և իրականում չեղած գիրքը դարձյալ նշվել է ցուցակում (նույնիսկ ծանոթության մեջ չի նշվել, որ գիրքը կեղծ է): Եվ այդպես, ցուցակի մեջ իրական գրքերի կոդքին տեղ են գտել բազմաթիվ չեղած, եթե կարելի է ասել, վրիպակ գրքեր, մի հանգամանք, որ շատ վնասակար է և ապակողմնորոշող ամեն կարգի մատենագիտության մեջ վերջնական լինի այն, թե փորձնական:

Բերենք ցուցակում նշված այդպիսի կեղծ գրքերի մի քանի օրինակ միայն, ցուցակի սկզբի մասից.

Ներսես Շնորհալի: Յիսուս որդի: Վենետիկ, հրատ. Արզար Գպիր Թոխատեցի, 1565:

Սաղմոս: Վենետիկ, տպ. Զուան-Բատիստա Բովիս, 1666:

Սաղմոս: Ամստերդամ, հրատ. Կարապետ Անդրիանացի, 1666:

Սաղմոս: Ամստերդամ, հրատ. Ոսկան Երևանցի, 1666:

Յովաննէս Պոնա: Զեռածութիւն յերկինս: Հոռոմ, տպ. Ուրբանյան, 1671:

Նաբեկ փոքրագիր: Մարսել, 1674:

Նաբեկ փոքր: Մարսել, տպ. Ս. Էմիլիանի և Ս. Սարգսի, 1675:

Տոնացոյց: Վենետիկ, Միքելանջելո Բարբոնի, 1678:

Ակն հոգեկան: Մարսել, 1678:

Պատեզ հոգևոր: Մարսել, 1678:

Կղեմես Գալանոս: Միաբանութիւն... հտ. Ա (միայն հայերեն բնագիրը), Հոռոմ, տպ. Ուրբանյան, 1680:

Գիրք ժողովածոյ... Նոր Զուգա, 1681:

Գպրուբեան գիրք: Վենետիկ, տպ. Միքելանջելո Բարբոնի, 1685:

Գիրք ժողովածոյ... Նոր Զուգա, 1686:

Խաչատուր Էրզրումեզի Առաքելեան: Գիրք քերականութեան: Լիվոռնո, տպ. Ս. Էմիլիանի և Ս. Սարգսի, 1691:

Պատմութիւն կայսրին Փոնցիանոսի: Կ. Պոլիս, 1693 և այլն:

Նշված թվականներին, նշված թաղաքներում այսպիսի գրքեր չեն հրատարակվել. այս գրքերը հիշատակող ցանկերում կամ աշխատություններին մեջ պարզապես թյուրիմացարար է տեղ գրտել այս կամ այն գրքի անունը և կամ սխալ է նշվել գրքի հրատարակման թվականը (երբեմն էլ վայրը):

«Ցուցակ»-ում XVIII դարի հրատարակությունների մեջ այսպիսի կեղծ գրքերի քանակը շատ ավելի է՝

Այդպես ստեղծվել է հայ մատենագիտության մեջ տեղ գտած վրիպակների մի մատենագիտություն:

Գուցե, մտածենք, թե կազմողները սկզբունք են ունեցել իրրև գիրք նշելու տարբեր մատենագիտական աղբյուրներում վրիպակի կամ թյուրիմացության պատճառով «առաջացած» ամեն մի «հրատարակություն»: Ի դեպ, ցուցակի առաջարկում (էջ X) ուղղակի ասված է, որ ցուցակի մեջ իրրև գիրք է նշված այս կամ այն մատենագիտական աշխատության մեջ թույլ տրված ամեն մի վրիպակ: Եթե կազմողները վրիպակներով ստեղծված, գոյություն չունեցող գրքեր նշելը կարևոր են համարել, ապա այդ սկզբունքը նրանք պետք է մինչև վերջ պահպանեին, որ սակայն չի արվել:

Մի բան, որի պակասը չկա հայ մատենագիտության մեջ, վրիպակն է, բայց անհասկանալի ընտրությունը այս ցուցակում վրիպակների ու սխալների մի մասը դարձել է գիրք, մյուս մասը՝ ոչ: Օրինակ, Գ. Զարբհանալյանի «Պատմություն հայկական տպագրության» գրքի (Վենետիկ, 1895) վերջում եղած հնատիպերի ցուցակում նշված է Խորենացու Պատմության և Աշխարհագրության 1685-ի ամստերդամյան հրատարակություն, որը ներկայացված է իրրև առաջին տպագրություն: Սա հեղինակի թույլ տված սխալն է, որ անցել է նաև այլ ցուցակների ու գրքերի մեջ, սակայն ներկա ցուցակում ահա չկա այս կեղծ գիրքը: Կամ՝ նույն Զարբհանալյանի «Հայկական մատենագիտության» մեջ նշված է, որ Հովհաննես Մրթուզի

1 Այդ ակնհայտորեն չեղած գրքերը ցուցակում չեն տարբերվել այն գրքերից, որոնք իրականում կան, բայց չեն գտնվել Երևանի, Թիֆլիսի և Բաքվի գրադարաններում, ճիշտ ու սուտ գրքերը հավասարապես ստացել են նույն տարբերանշանը՝ երկու աստղ:

2 Գ. Զարբհանալյանի թույլ տված այս, ինչպես և մի շարք այլ վրիպակներ անցել են հուլանդացի բանասեր Դուրիեզի մի հոգվածի մեջ, որ նվիրված է Հոլանդիայի հայկական տպագրությանը. (տե՛ս «Ons Amsterdams» հանդեսի 1961 թ. 6-րդ համարը, էջ 185):

«Գիրք համառոտ վասն իսկապէս ճշմարիտ հաւատոյ» գիրքը իրր լույս է տեսել 1658 թ., որ թյուրիմացութեան արդյունք է կամ վրիպակ: Սա ես նշված չէ ներկա ցուցակում: Զարրհանալյանի նույն մատենագիտութեան մեջ կան 1698-ի «Ժամագիրք» (Ամստերդամ), 1699-ի «Գիրք խոստովանութեանց» (Կ. Պոլիս), որոնք նույնպէս տեղ չեն դրել ցուցակում (անկախ այն բանից, այս գրքերը կեղծ են, թե իրական, ըստ ընդունված սկզբունքի նրանք պետք է նշվեն): Հիշենք նաև Զարրհանալյանի մի լուրջ վրիպակը: Ըստ նրա մատենագիտութեան (էջ 100) Շուշիում 1730 թ. տպագրվել է Հովսեփ Արցախեցու «Բառարան համառոտ»-ը: Ներկա ցուցակում ընդունված կանոնի համաձայն 1730-ի տակ այս «գիրքը» որ վրիպակով է ծնունդ առել, նույնպէս պետք է տեղ գտնեն, բայց տեղ չի գտել: Եվ այսպէս, հենց միայն Գ. Զարրհանալյանի աշխատութիւններում եղած բազմաթիվ վրիպակներից ու սխալներից անսկզբունք կերպով մի մասը իրր գիրք նշված է «Յուցակ»-ում, մի մասը՝ ոչ:

Բավական թվով այդպիսի վրիպակներ կան նաև Լեոյի, Ե. Լեոնյանի և այլոց աշխատութիւններում, որոնց մի պատահական մասն է միայն «գիրք» դարձել այս ցուցակում:

Քիչ վրիպակներ չկան վերջին տարիներս տպագրված մի շարք հոգովածներում, ուր քննվում են գրքի պատմութեան հարցերը: Օրինակ, թեկուզ Հայաստանի ԳԱ «Տեղեկագիր» (հաս. գիտ.) 1962 թ. 5-րդ համարի 47-րդ էջում նշված է, որ Կ. Պոլսի հայտնի տպագրիչ Աստվածատուրի առաջին գիրքը, որ մի Նաւակոն է, տպագրվել է 1799-ին (պետք է լինի՝ 1699): Ըստ ցուցակում ընդունված կանոնի այնտեղ պետք է նշվեր 1799-ի Շարակնոց, որ չի արվել:

Ուշադրութիւն է գրավում նաև այն, որ եթե մատենագիտական տարբեր աղբյուրներում տեղ գտած վրիպակները դարձել են «գիրք» և նշվել «Յուցակ»-ում, ապա նույն և մի քանի այլ աղբյուրներում հիշատակված մի շարք գրքեր, որոնք թեև չկան ձեռքի տակ, բայց լայն գոյութիւնը հավանական է (կամ, համեմատյալ դեպք, հնարավոր չէ ժխտել) դուրս են թողնվել: Օրինակ, Կ. Գարիկյանը «Բյուզանդիոն»-ի 1906 թ. 2963 համարում գրել է, որ ինքը Սերաստիայում տեսել է Հակոբ Մեղապարտի Պարզատումարի տառերով տպագրված Սաղմոսաւան: Այդ Սաղմոսաւանը Հակոբի տպագրած գրքերի ցանկի մեջ է մտնում Գ. Գալեմբարյանը («Հանդես ամսօրյա», 1913, էջ 712—713), այն հիշատակել են նաև այլ հեղինակներ: Ոչ ոք չի կարող պնդել, որ Գարիկյանի պէս բարեխիղճ, բժախնդիր մարդը սխալ տեղեկութիւն է տվել: Նման հրատարակութեան հնարավորութիւնը իրոք կա:

Բայց ցուցակում տեղ չի տրվել այդ Սաղմոսաւանին: Կամ, Գ. Զարրհանալյանի «Պատմութիւն հայ տպագրութեան» գրքում խոսք կա 1474-ին տպված՝ հայերեն բնագիր ունեցող մի գրքի մասին (էջ 4), որի գոյութիւնը իրոք չի բացառվում: Սա նույնպէս դուրս է մնացել ցուցակից: Այնուհետև, Գ. Գալեմբարյանը մի ուրիշ հոգովածում («Հանդես ամսօրյա», 1914, էջ 17—22) խոսում է 1579 թ. Հոռմում կատարված հայերեն (առաջին) տպագրութեան մասին և բերում այդ բնագիրը: Դա ֆրանսիացի Ռ. Գրանժոնի կողմից ձուլված հայկական տառերով կատարված մի փորձնական տպագրութիւն է, որ նույնպէս դուրս է մնացել ցուցակից:

Հիշված այս բոլոր աղբյուրները քաջ ծանոթ են եղել կազմողներին (այլ առիթներով հղումներ են արված), բայց հարկ եղած ուշադրութեամբ չեն օգտագործվել:

Մի երկու խոսք էլ ասենք «Յուցակ»-ում տեղ գտած այնպիսի բացթողումների մասին, որոնք չի կարելի կազմողների աշխատանքի թերութիւնը համարել, քանի որ այդ կարգի մի շարք գրքեր կարող էին առհասարակ ծանոթ չլինել կազմողներին (դրանք չեն հիշվում հայկական մատենագիտական աղբյուրներում): Այդպիսի բացթողումների մի զգալի մասը վերաբերում է օտարերկրացիների այնպիսի հրատարակութիւնների, որոնցում կան հայերեն բնագրեր կամ այբբեն՝ XVI դարում տպագրված այդ հրատարակութիւններից են Բլեզ Վիժների «Ձեռնարկ ծածկագրերի մասին» ֆրանսերեն գիրքը (Փարիզ, 1586) հայկական այբբենի երկու տախտակով⁴, Դե Բրեյի «Այբբեններ և տառատեսակներ» գիրքը (Յրանկֆուրտ, 1596) հայկական տառատեսակների աղյուսակով⁵, Պետրոս Գերանոս Պալմայի «Նմուշներ...» լատիներեն գիրքը (Փարիզ, 1596) հայկական բնագրով (այս գրքի երկու օրինակն ունի Ալ. Մյասնիկյանի անվան գրադարանը), 1548-ին տպագրված «De Ratione communi omnium linguarum...» գիրքը, լատինատառ հայերենի նմուշներով:

Շատ ավելի են ցուցակից դուրս մնացած XVII և XVIII դարերի հրատարակութիւնները: Հիշենք միայն մի քանիսը. Դելլա Պորտայի «De distillatione...» գիրքը, Հոռմ, 1608 և վերահրատարակված Ստրաստուրդում 1609 թ.: Այնու-

3 Օտարերկրացիների այդպիսի հրատարակութիւններից «Յուցակ»-ում տեղ են դրել հիմնականում հայ մատենագիտութեան մեջ հայտնի մի շարք գրքեր (Պոստելի, Ամբրիոսոսի աշխատութիւնները և այլն):

4 Տե՛ս «Տեղեկագիր» ՀՍՍՀ ԳԱ (հաս. գիտ.), 1965, № 6, էջ 87—91:

5 «Տեղեկագիր», 1965, № 12, էջ 88:

հետև, Բրայրն Ուոլտերնի «Introduction»-ն (Լոնդոն, 1654 և 1655), Կլոդ Լամբլի «Erzeuves générales des caractères» գիրքը (Փարիզ, 1742), Ցոհաննես Անշեդեի «Proef van Iesferen» (Հաարլեմ, 1768), Զիանթատիստա Բոդոնիի «Pel Solenne Battesimo di S. A. R. Ludovico» (Պարմա, 1774) գրքերը, ինչպես և Փարիզում 1767-ին տպված «Encycloëdie elementaire...» հանրագիտարանի Բ հատորի Բ մասը, Հոռմում 1776-ին տպագրված «Alphabetum Barmanicum» գիրքը և այլն: Այս բոլոր հրատարակությունների մեջ չան հայերին բնագրեր կամ հայկական այբուին (մի քանիսն էլ ունեն հայագիտական շատ ուշագրավ բովանդակություն): Թվարկված գրքերին կարելի է ավելացնել նաև Հալեում 1756-ին հայերեն տպված մի աղոթք, Հոռմում 1673-ին տպված մի հայերեն այբբենարան և այլն:

«Ցուցակ»-ում քիչ չեն նաև տարբեր բնույթի մատենագիտական սխալներն ու անճշտություն-

ները, որոնց մասին մանրամասն հարկ չկախոսելու, միայն օրինակի համար տանք մի նշանաշար 97-րդ համարի տակ նկարագրված 1676 թ.: Մաշտոց-ը ունի ծանոթագրություն, ուր ասված է, թե Մատենադարանի հնատիպ դրականության հավաքածուի մեջ 1164-րդ համարի տակ պահվում է հիշյալ թվականի Մաշտոցի մի օրինակ, որի վրա իբրև տպագրության վայր նշված է Մարսելը և որ իբրև նույն Մատենադարանի ձեռագրատանը 2423 համարի տակ պահվող նույն թվականի Մաշտոցի վրա տպված է Զմյուռնիա: Մինչդեռ դա ճիշտ չէ, Մատենադարանի հիշյալ համարները չփոթված են, մի Մաշտոցի համարը վերագրված է մյուսին: Կամ՝ «Ցուցակ»-ում գրքերի նկարագրությունների տակ նշված է ամեն մի գրքի գտնվելու վայրը և այն մատենագիտական աղբյուրները, ուր հիշատակված է գիրքը: Այստեղ ևս կան սխալներ ու շփոթումներ:

Ռ. ԻՇԽԱՆՅԱՆ

ANNELIESE LÜDERS, *Die Kreuzzüge im Urteil syrischer und armenischer Quellen*, Berlin, 1964.

А. ЛЮДЕРС, *Крестовые походы в оценке сирийских и армянских источников*, Берлин, 1964.

Книга немецкого сиролога А. Людерс «Крестовые походы в оценке сирийских и армянских источников» рисует представления некоторых сирийских и армянских хронистов о крестовых походах в латинских княжествах Палестины и северной Сирии и характеризует их хроники как исторические источники. Сведения этих источников в данной книге рассмотрены по определенным темам. Эти темы следующие: «Причины крестовых походов», «Характер ведения войны франками», «Роль человека во франкских государствах», «Оценки западных и сирийских франков», «Отношение франков к яacobитской церкви и ее оценка духовной жизни франков в Сирии», «Отношение франков к сопредельным государствам (zur staatlichen Umwelt)», «Реакция ближневосточного мира на появление франков» и «Торговля, обращение и строительная деятельность франков». Если автор и не рассматривает податного обложения или проблематики поземельных отношений, то некоторые из выдвинутых в книге тем имеют важное значение для изучения латинского Востока.

Более полное освещение в книге А. Людерс находят сирийские хроники. Из армянских источников она использует только хроник Матвея Эдесского, включенную Михаилом Сирийцем в свою хронику, часть исторического труда Василия и надгробное слово Василия, посвященное графу Балдуину. Автор не использует хроник Григория Проповедника, Смбата Спараса, малых армянских хроник и др., которые содержат много сведений по теме данной монографии. Поэтому армянские источники XIII в. в ней почти отсутствуют, хотя они наиболее богаты соответствующими сведениями именно для этого века.

По указанным темам автору вполне удастся охарактеризовать оценку франков сирийскими и армянскими хронистами и отношение к ним по использованным источникам. Более сложным оказывается вопрос характеристики источников. «Впрочем, гораздо более полную картину,—пишет А. Людерс по этому вопросу,—дало бы привлечение мусульманских и западных источников, но это лежит вне рамок данной работы» (стр. 87). Действительно, привлече-